



Common borders. Common solutions.

ԴԱՍԸՆԹԱՑ 1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՄՈԴՈՒԼ 1. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ի՞նչ է զբոսաշրջությունը .....	2
2. Զբոսաշրջության վիճակագրության հայեցակարգային հիմքերը .....	2
3. Այցելուի բնութագիրը .....	3
4. Զբոսաշրջային ճանապարհորդությունների բնութագրերը .....	4
5. Զբոսաշրջային արդյունքի տեսակները .....	5
6. Ճանապարհորդության կամ այցելության տևողություն .....	5
7. Ծագում և նպատակակետ .....	6
8. Տրանսպորտային միջոցները .....	6
9. Հյուրանոցային տնտեսության օբյեկտներ .....	7
10. Զբոսաշրջության ֆենոմենը .....	8
11. Միջազգային զբոսաշրջության վիճակագրական տվյալներ .....	10
12. Զբոսաշրջության վիճակագրության զարգացումը ՀՀ-ում .....	11
Գրականության ցանկ .....	12

## **1. Ի՞նչ է զբոսաշրջությունը**

### **Զբոսաշրջության սահմանումը**

Համաձայան ՄԱԿ ԶՀԿ Զբոսաշրջության տերմինների բառարանի՝ Զբոսաշրջությունը սոցիալական, մշակութային և տնտեսական ֆենոմեն է, որն իրենից ներկայացնում է մարդկանց ճանապարհորդությունն իրենց սովորական միջավայրից դուրս վայրեր կամ երկրներ՝ անձնական կամ գործնական/մասնագիտական նպատակներով։ Այս մարդիկ կոչվում են այցելուներ (որոնք կարող են համարվել զբոսաշրջիկներ կամ էքսկուրսանտներ, ուղարկուներ և ոչ ռեզիդենտներ), որոնց գործունեությունը կապված է զբոսաշրջության հետ՝ ներառելով նաև զբոսաշրջային ծախսեր։

### **Զբոսաշրջության Էռլեյունը**

Զբոսաշրջությունը մարդու ժամանակավոր կացությունն է մարդու մշտական կացության վայրից (սովորական միջավայրից) դուրս։

Այլ կերպ ասած, որպես զբոսաշրջություն, մենք մեկնում ենք մեր սովորական միջավայրից որևէ զբոսաշրջավայր (destination), որտեղ անց ենք կացնում մեր կյանքի՝ հիմնականում սովորականից տարբերվող մի մասը։

Իսկ զբոսաշրջությունը ոչ միայն տարածք է իր սահմաններով, ենթակառուցվածքներով ու ծառայություններով, այլ նաև կյանքն ու կենսակարգն է տեղում։

Որքան հետաքրքիր ու ինքնատիպ է կյանքը տեղում, այնքան գրավիչ ու մրցունակ է զբոսաշրջավայրը (the destination)։

Զբոսաշրջային օպերատորը զբոսաշրջավայրում զբոսաշրջիկի կյանքի <<կոմպոզիտորն>> է և պատասխանատու է այդ կյանքի պատշաճ կազմակերպման և ապահովման համար։

## **2. Զբոսաշրջության վիճակագրության հայեցակարգային հիմքերը**

Համաձայն ՄԱԿ ԶՀԿ զբոսաշրջության տերմինների բառարանի և Զբոսաշրջության վիճակագրության միջազգային ռեկոմենդացիաների՝ զբոսաշրջության վիճակագրության հիմնական հեցակարգային հիմքերը հետևյալն են։

### **Տնտեսական տարածք / Economy of Reference**

«Տնտեսական տարածք» տերմինը աշխարհագրական նշանակության է և մատնանշում է այն երկիրը, որի համար կատարվել է չափումը (հղման երկիր): «Էկոնոմիկա» (կամ «հղման տնտեսություն») տնտեսական տեղեկանք է, որը սահմանվում է այնպես, ինչպես վճարային հաշվեկշռում և Ազգային հաշիվների համակարգում։ այն վերաբերում է հղման երկրում ռեզիդենտ տնտեսվարողներին։

**Կացության վայր – Կացության երկիր, սովորական կացության վայր երկրում:**

Կացության վայրի կոնցեպցիան թույլ է տալիս դասակարգել այցելուներին՝ ըստ իրենց ծագման վայրի և բնութագրելու իրենց նպատակակետը (զբոսաշրջավայրը)՝ այդպիսով հնարավորություն տալով տարբերակել զբոսաշրջության ձևերը։

### **Քաղաքացիություն և ազգություն**

Ճանապարհորդի «Կացության երկիրը» և քաղաքացիությունն ու ազգությունը տարբեր հասկացություններ են։ Ճանապարհորդը սովորաբար այն երկրի ազգությանը կամ

քաղաքացիության է պատկանում, որի կառավարությունը տրամադրում է նրա անձնագիրը (կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ), նույնիսկ եթե նա բնակվում է այլ երկրում: Ճանապարհորդը կարող է ունենալ մեկից ավելի անձնագիր և, հետևաբար, մեկից ավելի քաղաքացիություն: Որոշ երկրներում սահմանին կամ այլուր վիճակագրական գործողություններում հաշվի է առնվում միայն ճանապարհորդի ազգությունը, որը նշված է ներկայացված անձնագրում: Այնուամենայնիվ, չնայած միգրացիոն վիճակագրության մեջ հաճախ օգտագործվելուն, քաղաքացիություն հասկացությունը չի օգտագործվում որպես պահանջ կամ սահմանում գրոսաշրջության վիճակագրության մեջ:

Որքան էլ որ ազգությունը նշված է ճանապարհորդի անձնագրում, բնակության երկիրը պետք է որոշվի հարցման միջոցով:

**Խորհուրդ է պրվում, որ ճանապարհորդները (և այցելուները) դասակարգվեն հիմք ընդունելով նրանց կացության երկիրը:**

#### Սովորական միջավայր

Անհատի սովորական միջավայրը, որը գրոսաշրջության հիմնական հասկացությունն է, սահմանվում է որպես աշխարհագրական տարածք, որի շրջանակներում անհատն իրականացնում է իր սովորական կյանքի առօրյան:

«Սովորական միջավայր» հասկացության ներդրման նպատակն է այցելուներից բացառել այն ճանապարհորդներին, ովքեր կանոնավոր կերպով շրջում են իրենց սովորական բնակության վայրի և աշխատանքի կամ ուսման վայրի միջև, կամ հաճախակի այցելում են իրենց սովորական կյանքի ընթացքում գտնվող վայրեր, օրինակ՝ ընկերների կամ հարազատների տներ, առևտուի կենտրոններ, կրոնական, առողջապահական կամ ցանկացած այլ վայր, որը կարող է լինել զգալի հեռավորության վրա կամ վարչական այլ տարածքում, բայց կանոնավոր և հաճախակի այցելվող վայր է:

#### Այցելու

Այցելուն այն ճանապարհորդն է, որը մեկնում է հիմնական նպատակակետ (destination)<sup>1</sup>՝ իր սովորական միջավայրից դուրս, մեկ տարուց պակաս ժամկետով, ցանկացած հիմնական նպատակով (բիզնես, հանգստի կամ այլ անձնական նպատակներով), բացառությամբ ընդունող երկրի (գրոսաշրջավայրի) ռեզիդենտ գործատուի կողմից աշխատանքի ընդունվելու:

#### Հրոսաշրջիկ

Այցելուն համարվում է գրոսաշրջիկ (կամ գիշերակացով այցելու), եթե նրա ճամփորդությունը ներառում է առնվազն մեկ գիշերակաց, կամ՝ էքսկուրսանու կամ նոյն օրվա այցելու), եթե ճամփորդությունը չի ներառում գիշերակաց:

### **3. Այցելուի բնութագիրը**

Այցելուների անձնական բնութագրերը պետք է հավաքագրվեն կամ վարչական ընթացակարգերի միջոցով (օրինակ՝ մուտքի/մեկնման քարտեր, կոլեկտիվ կացարաններում հավաքագրված տեղեկատվության կառավարում և այլն) կամ տնային տնտեսությունների կամ սահմանային հարցումների միջոցով կամ ճամփորդության հետ կապված հատուկ վայրերում կամ հատուկ հանգամանքներում: Այցելուների բնութագրերը վերաբերում են հետևյալին:

- Մեռը
- Տարիքը

- Տնտեսական գործունեության կարգավիճակը
- Զբաղվածությունը
- Եկամուտը
- Կրթությունը

Անհրաժեշտության դեպքում պետք է ներառվեն նաև այլ բնութագրեր, ինչպիսիք են սովորական բնակության վայրի բնակչությունը, ծննդյան վայրը և ազգային կամ վարչական սահմաններին մոտ լինելը, քանի որ այս գործոնները ազդում են ճանապարհորդելու հակվածության վրա:

#### **4. Զբոսաշրջային ճանապարհորդությունների բնութագրերը**

##### Հիմնական նպատակը

Յուրաքանչյուր զբոսաշրջային ուղևորություն ունի հիմնական նպատակ, թեև այցելուն կարող է նաև երկրորդական գործունեություն իրականացնել իր ճանապարհորդության ընթացքում:

**Անձնական.** Այս կատեգորիան ներառում է զբոսաշրջային ուղևորությունների բոլոր նպատակները, որոնք չեն դասակարգվում որպես բիզնես կամ մասնագիտական.

- Արձակուրդներ, ժամանց և հանգիստ
- Այցելություն ընկերներին և հարազատներին
- Կրթություն և վերապատրաստում
- Առողջություն և բժշկական սպասարկում
- Կրոն/Ուխտագնացություն
- Առևտուր
- Տրանզիտ
- Այլ

**Բիզնես և մասնագիտական.** Այս կատեգորիան ներառում է ինքնազբաղվածների և աշխատողների գործունեությունը, քանի դեռ դրանք չեն հանդիսանում ընդունող երկրում ռեզիդենտ գործատուի հետ աշխատանքային հարաբերություններ: Այն նաև ներառում է, օրինակ.

• Մասնակցություն ժողովների, կոնֆերանսների, ցուցահանդեսների,  
 • Դասախոսություններ կարդալը, համերգներ և ներկայացումներ տալը, խաղեր կազմակերպելը,  
 • Ընդունող երկրի ռեզիդենտ շիանդիսացողի անունից ապրանքներ և ծառայություններ խթանելը, իրացնելը, ձեռք բերելը,  
 • օտարերկրյա պետական միջոցառումներին մասնակցելը որպես դիվանագիտական, ռազմական կամ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչ, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատում ես (դիվանագիտական ներկայացուցությունում, այլ ընդունող երկրում,

• Մասնակցություն ոչ պետական, հասարակական կազմակերպությունների միջոցառումներին,  
 • Մասնակցություն գիտական, ակադեմիական հետազոտություններին,  
 • Զբոսաշրջային ճանապարհորդությունների կազմակերպում, հյուրանոցային, տրանսպորտա-

յին և այլ ծառայությունների պայմանագրերի կնքում, ոչ ռեգիդենտ կազմակերպությունների անունից գրսավարի ծառայությունների մատուցում,

- Մասնակցություն սպորտային միջոցառումներին,
- Մասնակցություն ֆորմալ և ոչ ֆորմալ աշխատանքային դասընթացների,
- Անհատական տրանսպորտային միջոցի անձնակազմի անդամ լինելը (կորպորատիվ օդանավ, գրսանավ, այլ):

## 5. Ջրոսաշրջային արդյունքի տեսակները

«Ջրոսաշրջության արդյունք» նկարագրում է գրսաշրջային վայրում առկա տարբեր գործոններով (այցելած վայրերի բնութագրեր, տրանսպորտի տեսակներ, հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, գրսաշրջավայրի առանձնահատկություններ և այլն), ինչպիսիք են տուրիստ բնության մեջ, կյանքը ֆերմայում, այցելություններ պատմական և մշակութային վայրեր, այցելություններ որոշակի քաղաքներ, հատուկ սպորտային փորձառություններ, լողափ և այլն: «Ջրոսաշրջության արդյունք» հասկացությունը կապված չէ տնտեսական վիճակագրության մեջ օգտագործվող «արտադրանք» հասկացության հետ, այլ ավելի շուտ օգտագործվում է գրսաշրջության բիզնեսի մասնագետների կողմից շուկայավարելու, հատուկ փաթեթներ կամ երթուղիներ մշակելու նպատակով:

Այնուհետև արդեն կարելի է խոսել «Ջրոսաշրջային արդյունքի» հատուկ տեսակների մասին, ինչպիսիք են.

- Գաստրոնոմիական գրսաշրջություն
- Քաղաքային գրսաշրջություն
- Արևի և ավագի գրսաշրջություն
- Ագրոգրոսաշրջություն
- Բուժական գրսաշրջություն
- Զմեռային գրսաշրջություն և այլն

Այս դասակարգումն ավելի ու ավելի պահանջվում և օգտագործվում է գրսաշրջության շահագրգիռ կողմերի կողմից՝ որպես շուկայավարման գործիք:

## 6. Ճանապարհորդության կամ այցելության տևողություն

Ջրոսաշրջության ծավալը կարելի է բնութագրել ուղևորությունների քանակով, ինչպես նաև գիշերակացերի քանակով: Ուղևորության տևողությունը կարևոր գործոն է գրսաշրջային ծառայությունների պահանջարկի մակարդակը գնահատելու համար (ինչպես օրինակ՝ հյուրանոցային ծառայությունների): Ուղևորության կամ այցելության հետ կապված ծախսերը գնահատելու համար անհրաժեշտ է որոշել դրա տևողությունը:

Ուղևորության ընդհանուր տևողությունը, ինչպես ընկալում և հայտնում է այցելուն, կարող է տարբերվել այցելած վայրերում մնալու ընդհանուր տևողության՝ կապված դեպի տարբեր վայրեր և դրանց միջև ճանապարհորդելու ժամանակի հետ:

Ուղևորության տևողությունը, որը ներառում է գիշերակաց, արտահայտվում է գիշերների քանակով: Զպետք է ճշգրտումներ կատարվեն՝ նկատի առնելով, թե ճանապարհորդությունը սկսել է վաղ առավոտից կամ ավարտվել ուշ երեկոյան: Ուղևորությունները, որոնք չեն ներառում

գիշերակաց, պետք է համարվեն նոյն օրվա ուղևորություններ (Էքսկուրսիա)՝ անկախ ուղևորության վրա ծախսված ժամերի քանակից:

## 7. Ծագում և նպատակակետ

Ներգնա ճանապարհորդությունների դեպքում բոլոր ժամանումներն անհրաժեշտ է դասակարգել ըստ մշտական կացության (ոեզիդենտության) երկրի, այլ ոչ ըստ ազգության: Մշտական կացության երկրում են ընդունվում ճանապարհորդության և դրա կազմակերպման հետ կապված որոշումները: Արտագնա ճանապարհորդությունների դեպքում մեկնումները պետք է դասակարգվեն ըստ հիմնական նպատակակետի՝ գրոսաշրջավայրի (destination):

Երկրների և տարածքների միևնույն դասակարգումը պետք է օգտագործվի ինչպես մշտական կացության, այնպես էլ արտագնա նպատակակետը դասակարգելու համար և պետք է հիմնված լինի Միավորված Ազգերի Կազմակերպության Վիճակագրության բաժնի վիճակագրական օգտագործման համար նախատեսված երկրների կամ տարածքային ստանդարտ ծածկագրերի վրա:

Ներքին գրոսաշրջության վերլուծության համար նոյնպես անհրաժեշտ է ճանապարհորդությունները բնութագրել ըստ այցելուի մշտական կացության վայրի (սովորական միջավայրի), նրա անձնական հատկանիշների և ուղևորության հիմնական նպատակակետի: Այս տեղեկատվությունը, որը սովորաբար հավաքվում է տնային տնտեսությունների հարցումների միջոցով, հաճախ ներկայացված է մատրիցում, որը ցույց է տալիս ճանապարհորդությունների քանակը և տևողությունը՝ ըստ ծագման և նպատակակետի:

## 8. Տրանսպորտային միջոցները

Տրանսպորտային միջոցները սովորաբար որոշվում են այցելուների կողմից օգտագործվող հիմնական միջոցներով: Հիմնական միջոցը կարող է որոշվել տարբեր ձևերով և հիմնված լինել, օրինակ՝

- Այն միջոցի վրա, որով անցել են հիմնական մղոնները/կիլոմետրերը,
- Այն միջոցի վրա, որով անց է կացվել հիմնական ժամանակը,
- Այն միջոցի վրա, որի մասնաբաժինն ընդհանուր տրանսպորտային ծախսի մեջ ամենամեծն է:

Տրանսպորտային միջոցների ստանդարտ դասակարգումը հետևյալն է.

N	Հիմնական խմբերը	Ենթախմբերը
1.	Օդային տրանսպորտ	<ol style="list-style-type: none"><li>Զվացուցակով թռիչքներ</li><li>Առանց չվացուցակի թռիչքներ</li><li>Մասնավոր օդանավեր</li><li>Օդային տրանսպորտի այլ միջոցներ</li></ol>
2.	Ջրային տրանսպորտ	<ol style="list-style-type: none"><li>Հայներ կամ լաստանավ</li><li>Կրուիզային նավ</li><li>Ջրանավ</li><li>Ջրային տրանսպորտի այլ միջոցներ</li></ol>
3.	Ցամաքային տրանսպորտ	<ol style="list-style-type: none"><li>Երկաթգիծ</li><li>Շարժիչային վագոն կամ ավտոբուս և այլ հասարակական</li></ol>

	<p>ճանապարհային տրանսպորտ</p> <ul style="list-style-type: none"> <li>3. Ավտոմեքենայի վարձույթ վարորդով</li> <li>• Տաքսիներ, լիմուզիններ և վարորդով անհատական ավտոմոբիլների վարձույթ</li> <li>• Մարդկային կամ կենդանական ուժով տրանսպորտային միջոցների վարձույթ</li> </ul> <p>4. Սեփական տրանսպորտային միջոցներ (մինչև 8 նստատեղով)</p> <p>5. Վարձույթով տրանսպորտային միջոցներ առանց վարորդի (մինչև 8 նստատեղով)</p> <p>6. Տրանսպորտային այլ միջոցներ. ծի, հեծանիվ, մոտոցիկլետ,</p> <p>այլ:</p> <p>7. Ուղով</p>
--	---

## 9. Հյուրանոցային տնտեսության օբյեկտներ

Գիշերակացով այցելուները (գրոսաշրջիկները) սովորաբար պահանջում են որոշակի կացարան, որտեղ կարող են գիշերել, և կացարանը հաճախ կազմում է ընդհանուր ուղևորության ծախսերի զգայի մասը: Զբոսաշրջության քաղաքականության կարևոր խնդիրներից է հյուրանոցային տնտեսությունը, և զբոսաշրջության ոլորտի լիազոր մարմնին անհրաժեշտ են տվյալներ/վիճակագրություն այցելուների կողմից օգտագործվող կարճաժամկետ կացարանների և դրանց տեսակի վերաբերյալ՝ տարբեր տեսակի կացարանների պահանջարկը կանխատեսելու համար:

Կարճաժամկետ կացարանը կարող է տրամադրվել կամ առևտրային (շուկայական) հիմոնքներով, այսինքն՝ որպես վճարովի ծառայություն, նույնիսկ այն դեպքում, եթե օգտագործողից գանձվող արժեքը կարող է սուբսիդավորվել, կամ ոչ առևտրային (ոչ շուկայական) հիմոնքներով, այն է՝ որպես ընտանիքի, ընկերների կամ հարազատների կողմից մատուցվող ծառայություն՝ առանց վճարի կամ սեփական հաշվին (սեփական հանգստյան տներ): Այցելուները կարող են նաև չօգտվել կացարանային/հյուրանոցային ծառայություններից, ինչպես դա տեղի է ունենում ուսապարկերով քայլող զբոսաշրջիկների (backpackers) դեպքում, որոնք շատ դեպքերում նախընտրում են բացօթյա գիշերակաց:

Թեև կացարանների կամ հանգստյան տների ուղղակի գնումը միշտ այլընտրանք է եղել կարճաժամկետ կացարանների (հյուրանոցային տնտեսության օբյեկտների) օգտագործմանը, վերջերս ի հայտ են եկել հանգստյան տների ձեռքբերման և վարձակալության նոր ձևեր: Դրանք ներառում են timeshares/Ժամանակային վարձույթներ, condo hotels/բնակարանային հյուրանոցներ, fractionals/ֆրակցիոններներ, private clubs/մասնավոր ակումբներ և ընդհանուր օգտագործման և սեփականության այլ ձևեր, որոնք լրոզում են սահմանը, թե ինչ է նկարագրվում որպես վճարովի կացարան և ինչ է հանգստյան տների կամ պարզապես անշարժ գույքի սեփականությունը: Հաշվի առնելով այս հանգամանքների բնույթն ու բարդությունը՝ դժվարություններ են առաջանում նաև այցելուների համար տարբերակել հյուրանոցային տնտեսության օբյեկտների կամ օգտագործվող անշարժ գույքի տեսակները:

Հաշվի առնելով Գործունեության տեսակների և պրոդուկտների նոր վերախմբագրված

միջազգային դասակարգումները (the International Standard Industrial Classification of All Economic Activities (ISIC, Rev. 4 and the Central Product Classification (CPC), Ver. 2), որոնք այժմ հիմք են հանդիսանում զբոսաշրջային արդյունքների/պրոդուկտների և գործունեության տեսակների դասակարգման և հյուրանոցային ծառայությունների վերլուծության համար՝ Զբոսաշրջային կացարանների 1993 թվականի ստանդարտ դասակարգումը պետք է վերանայվի:

ISIC, Rev. 4 և CPC, Ver. 2 ուղեցույցերի վերջնական խմբագրումներից հետո և դրանց համապատասխան պետք է սկսվի միջազգային խորհրդատվական գործընթաց՝ ներգրավելով ազգային վիճակագրական ծառայություններին, ազգային զբոսաշրջային իշխանություններին և միջազգային կազմակերպություններին:

#### **Կարճաժամկետ կացարանները/հյուրանոցային տնտեսության օբյեկտները ներառում են.**

- Հյուրանոցներ
- Հանգստավայրային հյուրանոցներ / resort hotels
- Սուիթ/բնակարան հյուրանոցներ / Suite / apartment hotels
- Մոթելներ
- Հյուրատներ
- Պանսիոններ
- Զբոսաշրջային տներ / Bed and Breakfast Units
- Բունգալովներ / Visitor flats and bungalows
- Համատեղ սեփականության օբյեկտներ / Time-share units
- Հանգստյան տներ
- Շալեներ, բնակելի քութեզներ և կարինաներ / Chalets, housekeeping cottages and cabins
- Երիտասարդական հոսթելներ և լեռնային ապաստարաններ / Youth hostels and mountain refuges

**Ճամբարային բնակատեղիներ, հյուրանոցային ավտոմեքենաների և թրեյլերների պարկերը ներառում են.**

• Կացարանների տրամադրում ճամբարներում, հյուրանոցային ավտոմեքենաների և տրեյլերի պարկերում, ճամբարային բնակատեղիներում, ձկնորսության և որսորդական ճամբարներում կարճատև հանգստի նպատակով այցելուների համար

• Հյուրանոցային ավտոմեքենաների համար տարածքի և հարմարությունների տրամադրում  
• Պաշտպանված կացարանների կամ բիվակ հարմարությունների տրամադրում վրաններով կամ քնապարկերով կացություն ապահովելու համար:

#### **Այլ կացարաններ:**

- Ուսանողական ռեզիդենցիաներ / Student residences
- Դպրոցական հանրակացարաններ / School dormitories
- Բանվորական հոսթելներ / Workers hostels
- Մասնագիտացված տներ / Rooming and boarding houses
- Վագոն տնակներ / Railway sleeping cars

## **10. Զբոսաշրջության ֆենոմենը**

### Տնտեսական նշանակությունը

Կայուն գրոսաշրջությունը գրոսաշրջային երկրում/վայրում ստեղծում է լրացուցիչ գրոսաշրջային արդյունքներ և ծառայություններ և պահանջարկ ձևավորում դրանց նկատմամբ և այդպիսով նպաստում.

- Տնտեսական աճին
- Կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը
- Տնտեսական ապակենտրոնացմանը և համայնքային զարգացմանը
- Ներդրումների խթանմանը
- Աշխատատեղերի ստեղծմանը
- Տեղի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը
- Ազգային և համայնքների եկամտի ավելացմանը
- Պետության և տեղական ինքնակառավարման մարմինների եկամտի ավելացմանը

Զրոսաշրջությունը նաև հզոր գործիք է տարադրամի փոխարժեքը հավասարակշռելու համար: Վերջապես, գրոսաշրջությունը սնում է տնտեսության մյուս բոլոր ճյուղերը և սնվում դրանցից:

### Սոցիալական, մշակութային և բնապահպանական նշանակությունը

Կայուն գրոսաշրջությունը նաև պահանջարկ է առաջանում սոցիալական, մշակութային և բնական ռեսուրսների նկատմամբ և այդպիսով նպաստում.

- Ավանդույթների, մշակութային և բնական ռեսուրսների արժեքի (ներառյալ ֆինանսական) վերաբերյալ տեղական իրազեկվածության բարձրացմանը
- Ազգային և տեղական ժառանգության նկատմամբ հպարտության զգացման խթանմանը
- Ազգային և տեղական սոցիալական, մշակութային և բնական ժառանգության պահպանմանը, զարգացմանը և խթանմանը
- Մշակութային բազմազանությանը
- Միջմշակութային երկխոսությանը
- Շրջակա միջավայրի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը
- Շրջակա միջավայրի պաշտպանությանը և այդ ուղղությամբ ֆինանսական միջոցների ներգրավմանը
- Ենթակառուցվածքների զարգացմանը
- Մարդկային ռեսուրսների զարգացմանը
- Ժողովրդի և տեղի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը

### Քաղաքական նշանակությունը

Կայուն գրոսաշրջությունը նաև ունի կարողություն օգտագործելու գրոսաշրջությունը, ժառանգությունը, բոլոր գրոսաշրջային ռեսուրսները և միջմշակութային ռեսուրսները և այդպիսով նպաստել.

- Ազգերի, համայնքների և պետությունների միջազգային հեղինակության ու հարգանքի բարձրացմանը
- Ազգային իքնության պահպանմանն ու արժնորմանը
- Միջազգային համակեցությանը
- Մարդու իրավունքների և ազատությունների համընդիանութ հարգանքին և պաշտպանությանը՝ առանց ռասայական, գույնի, սեռի, լեզվի, կրոնական, քաղաքական կամ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, տարիքի, ծննդյան կամ այլ կարգավիճակի

ծտրականության

- Խաղաղությանը

## 11. Միջազգային գրոսաշրջության վիճակագրական տվյալներ

### Միջազգային գրոսաշրջային այցելությունների թիվը

Համաձայն ՄԱԿ ԶՀԿ Համաշխարհային Զբոսաշրջության Բարոմետրի / UNWTO World Tourism Barometer՝ Համաշխարհային գրոսաշրջությունը 2021 թվականին 4% աճ է գրանցել 2020 թվականի համեմատ (415 միլիոն այցելություններ 400 միլիոնի դիմաց): Այնուամենայնիվ, ըստ ՄԱԿ ԶՀԿ նախնական գնահատման, միջազգային գրոսաշրջային այցելությունները դեռևս 72%-ով պակաս են եղել նախահամավարակային 2019 թվականից: Սա հետևում է 2020 թվականին՝ գրոսաշրջության համար գրանցված ամենավատ տարվան, երբ միջազգային գրոսաշրջային այցելությունները նվազել են 73%-ով:

Ապագային նայելով, փորձագետների մեծամասնությունը չի տեսնում նախահամավարակային մակարդակների վերադարձը մինչև 2023 թվականը: Փաստորեն, հարցվածների 43%-ը որպես վերականգնման տարի նշում է 2023 թվականը, մինչդեռ 41%-ը ակնկալում է, որ 2019 թվականի մակարդակների վերադարձը տեղի կունենա 2024 թվականին կամ ավելի ուշ: ՄԱԿ ԶՀԿ 2021-2024 թվականների ամփոփ սցենարները ցուց են տալիս, որ միջազգային գրոսաշրջության համար 2019-ի մակարդակին վերադառնալու համար կարող է տևել երկուառուկեսից-չորս տարի:

2019 թվականը ուժեղ աճի ևս մեկ տարի էր, չնայած միջազգային գրոսաշրջային այցելությունների աճի տեմպն այդ տարի ավելի պակաս էր քան 2017 թվականի (+7%) և 2018 թվականի (+6%) բացառիկ տեմպերը:

2019 թվականին միջազգային գրոսաշրջային այցելությունների թիվն աճել է +4% և կազմել 1,46 միլիարդ:

### Միջազգային գրոսաշրջային եկամուտներ

Ըստ ՄԱԿ ԶՀԿ գնահատման մեկ գրոսաշրջային այցելությունից միջին եկամուտը 2021 թվականին հասել է ինչև 1500 ԱՄՆ դոլար, իսկ 2020 թվականին՝ 1300 ԱՄՆ դոլար 2019 թվականի 1000 ԱՄՆ դոլարի դիմաց: Դա պայմանավորված է մեծ խնայողություններով և ավելի երկար մնալու, ինչպես նաև տրանսպորտի և կացարանի ավելի բարձր գներով:

2021 թվականի միջազգային գրոսաշրջությունից եկամուտները կարող են հասնել 700-800 միլիարդ ԱՄՆ դոլարի, ինչը փոքր բարելավում է 2020 թվականի համեմատ, սակայն 2019 թվականի ցուցանիշի (1,7 տրիլիոն ԱՄՆ դոլար) կեսից պակաս է:

2019 թվականին միջազգային գրոսաշրջության ընդհանուր եկամուտներն աճել են +3%-ով՝ հասնելով 1,481 տրիլիոնի: Իսկ գրոսաշրջությունից արտահանման ընդհանուր եկամուտները հասել են 1,7 տրիլիոնի = գրոսաշրջային երկրների/վայրերի եկամուտներ + ուղևորափոխադրումներ:

### Այցելության նպատակը

Հանգստի նպատակով գրոսաշրջությունը հիմնականն է աշխարհի բոլոր տարածաշրջաններում, բացառությամբ Մերձավոր Արևելքի, որտեղ գերակշռում է ընկերներին և հարազատներին այցելելու (VFR), կամ բուժման կամ կրոնական նպատակներով գրոսաշրջությունը: Հանգստի գրոսաշրջության մասնաբաժինը 2000 թվականին 50%-ից աճել է

մինչև 55% 2019 թվականին:

Հանգստի, վերականգնողական, ժամանցային – 55%

Ընկերներին և հարազատներին այցելելու (VFR), բուժական, կրոնական, այլ – 28%

Բիզնես և մասնագիտական – 11%

Այլ – 6%

### Ըստ տրանսպորտային միջոցների

Օդային ճանապարհորդությունների տեսակարար կշիռը 2000 թվականի 46%-ից աճել է մինչև 59% 2019 թվականին, մինչդեռ ցամաքային տրանսպորտը նույն ժամանակահատվածում նվազել է 49%-ից մինչև 35%:

Օդային – 59%

Ճանապարհային – 35%

Զրային – 5%

Երկաթուղային – 1%

## **12. Զբոսաշրջության վիճակագրության զարգացումը <<-ում**

### Զբոսաշրջային այցելությունների և եկամուտների դինամիկան Հայաստանում

Համաձայն << Վիճակագրական կոմիտեի՝ 2021 թվականին համաշխարհային զբոսաշրջությունը 2020 թվականի համեմատությամբ աճել է 2,4 անգամ ( $870.000' 360.000$ -ի դիմաց): Այնուամենայնիվ, ներգնա զբոսաշրջային այցելությունները դեռ 54%-ով ցածր են եղել 2019-ի նախահամաճարակային տարվանից ( $1.894.000$ ): Սա հետևում է 2020-ին՝ զբոսաշրջության համար գրանցված ամենավատ տարվան, երբ միջազգային ժամանումները նվազել են ավելի քան 81%-ով:

Նայելով ավելի առաջ՝ փորձագետների մեծամասնությունը չի տեսնում, որ նախահամաճարակային մակարդակի վերականգնումը տեղի կունենա մինչև 2023 թվականը: Բայց մենք հուսով ենք, որ **մենք կհասնենք 2019 թվականի մակարդակներին 2022 թվականին, եթե այլ աղետ, ինչպիսին է Covid-ը կամ պատերազմը, նորից չկրկնվի:**

Համաձայն Միջազգային այցելությունների վիճակագրական հետազոտության արդյունքների՝ 2013թվականին մեկ զբոսաշրջային այցելությունից միշտին եկամուտները մինչև հաջորդ հետազոտությունը գնահատվել են 700-800 ԱՄՆ դոլար:

Փորձագիտական գնահատականներով մեկ զբոսաշրջային այցելությունից միշտին եկամուտը այս օրերին (**սակայն մինչև 2022 թվականի 2-րդ եռամյակում գրանցված գնաճը**) գերազանցում է 1000 ԱՄՆ դոլարը՝ հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման շնորհիվ, բայց ոչ զբոսաշրջային ծառայությունների գների բարձրացման պատճառով:

### Մեթոդաբանության զարգացումը

Մինչև 2020 թվականը Զբոսաշրջության վիճակագրության մեթոդաբանությունը լիովին համապատասխանում էր ՄԱԿ ԶՀԿ մեթոդաբանությանը:

Սահմանային էլեկտրոնային կառավարման և տեղեկատվական համակարգի (ՍԷԿՏ) ներդրման մեկնարկից ի վեր մենք մտածում էինք այն օգտագործել զբոսաշրջության

Վիճակագրության մեթոդաբանության կատարելագործման համար:

Քրտնաշան աշխատանքից հետո, ներառյալ մեր բոլոր միջոցների և հնարավորությունների վերլուծությունը և շահագրգիռ կողմերի հետ քննարկումները, Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2018 թվականին ընդունեց որոշում՝ բարելավելու Հայաստանի զբոսաշրջության վիճակագրության մեթոդաբանությունը՝ օգտագործելով ՍԵԿՏ հնարավորությունները և ՄԱԿ ԶՀԿ սահմանումները: Այն տրամադրում է ավելի ճշգրիտ տվյալներ զբոսաշրջային այցելությունների թվի, զբոսաշրջիկների տարիքի, սեոի և քաղաքացիության վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն կրկնվող այցելությունների մասին:

Նոր մեթոդաբանության փորձարկումը մեկնարկել է 2020 թվականին:

#### **Գրականության ցանկ**

1. GLOSSARY OF TOURISM TERMS, <https://www.unwto.org/glossary-tourism-terms>
2. International Recommendations for Tourism Statistics 2008, [https://unstats.un.org/unsd/tradeserv/tourism/08-40120%20IRTS%202008\\_WEB\\_final%20version%20\\_22%20February%202010.pdf](https://unstats.un.org/unsd/tradeserv/tourism/08-40120%20IRTS%202008_WEB_final%20version%20_22%20February%202010.pdf)
3. Tourism, culture and sustainable development, <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000147578>
4. TOURISM GROWS 4% IN 2021 BUT REMAINS FAR BELOW PRE-PANDEMIC LEVELS, <https://www.unwto.org/news/tourism-grows-4-in-2021-but-remains-far-below-pre-pandemic-levels>
5. Sustainable tourism: Contribution to economic growth and sustainable development, [https://unctad.org/system/files/official-document/ciem5d2\\_en.pdf](https://unctad.org/system/files/official-document/ciem5d2_en.pdf)
6. International Tourism Highlights, 2020 Edition, <https://www.e-unwto.org/doi/book/10.18111/9789284422456>
7. Business Statistics and Registers, <https://slideplayer.com/slide/6664509>
8. [www.armstat.am](http://www.armstat.am)
9. [www.mineconomy.am](http://www.mineconomy.am)